ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (XIX դ. վերջ— XX դ. սկիզբ)

ԷԴՄՈՆԴ ՏԻԳՐԱՆՅԱՆ

XIX դ. սկզբից Անդրկովկասը պատմականորեն արդեն ներգրավված էր ցարական Ռուսաստանի արտաքին, ներքին և ռազմական ծրագրերի շրջանակներում։ Այստեղ ևս նկատելի է դառնում կապիտալիզմի և առևտրի զարգացումը, որ նոր տնտեսական և քաղաքական շերտավորումներ առաջացրեց նախկին՝ ֆեոդալական, շրջանի համեմատությամբ։ Երկրամասի տնտեսության համար միաժամանակ բնորոշ է դառնում մեծ թվով գործարանների ու քաղաքացիական, և դրա հետ միասին հասարակական նոր տիպի (վարչական, թատերական, կայարանային, ծածկած շուկաներ, ցուցահանդեսային սրահներ և այլն) շենքերի կառուցումը։ Փոփոխություններ է կրում նաև շինարարական արվեստը։ Մեծաթռիչք դահլիճների և գործարանների արտադրամասերի ծածկերի համար օգտագործվում են մետաղե կոնստրուկցիաներ, սկսվում է տարածվել երկաթբետոնի կիրառումը։ Մեծ քաղաքներում, առաջին հերթին Թիֆլիսում, Բաքվում և Երևանում, սկսվում է քաղաքաշինական աշխատանքների աշխուժացում, մշակվում են նոր գլխավոր հատակագծեր, որոնցով և իրականացվում են քաղաքների կառուցապատումն ու բարեկարգումը։

Նոր որակ է ստանում նաև ճարտարապետության գաղափարական և գեղարվեստական ուղղությունը։ Ռուսաստանում տարածված ճարտարապետական ոճերից էկլեկտիկան, մոդեռնը և նեոկլասիցիզմը, նոր սոցիալական ճաշակն ու հյուսիսին նմանվելու ձգտումները նպաստում են այդ ոճերի ներմուծմանն ու արագ տարածմանը ողջ Անդրկովկասում։ Այս խնդիրներում որոշ նշանակություն ունեցավ նաև ազգային ինժեներական-կադրերի բացակայությունը, ուստի և XIX դ. առաջին կեսում ողջ նախագծային և կառուցողական գործը գտնվում էր օտար՝ գերմանացի, ռուս, լեհ և հրեա մասնագետների ձեռքում (Բիլֆելդ, Վ. Շրետեր, Օ. Սիմոնսոն, Ա. Շիմկևիչ, Ա. Զալցման, Կ. Տատիշչև, Ի. Պլոշկո, Ի. Գոսլավսկի և այլք)։ Տեղական մտավորականությունը, գլխավորապես հայազգի, դեռ նոր պետք է կազմավորվեր, քանի որ նույն շրջանում մեծ էր հայ երիտասարդության՝ Ռուսաստանի մեծ քաղաքներում բարձրագույն կրթություն ստանալու ձգտումը։ Ճարտարապետության ասպարեզում նման մի օջախ դարձավ Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների կայսերական ինստիտուտը, որտեղ արխիվային ոչ լրիվ տվյալներով, 1885—1915 թթ. ընթացքում, սովորել են մոտ 115 հայ երիտասարդներ՝ աչքի ընկնելով իրենց ընդունակություններով և բարձր առաջադիմությամբ։ Ուսումն ավարտելով, նրանք ցրվել են Ռուսաստանում և արտասահմանում, բայց հիմնական զանգվածը վերադարձել է հայրենիք՝ Անդրկովկաս։ Այստեղ արդեն 1895 թ. սկսած ճարտարապետության և շինարարության բնագավառում հայտնվում են նոր անուններ՝ Գ. Հալաջյան, Մ. Աղաջանյան, Խ. Տեր-Սարկիսյան, Մ. Մադաթյան, Վ. Սարգսյան, Գ. Տեր-Միքելյան, Ղ. Սարգսյան և շատ ուրիշներ։ Դժբախտաբար, ժամանակին ոչ ոք չի զբաղվել այս շրջանի հայ ճարտարապետների գործունեության ուսումնասիրությամբ, իսկ անողոք ժամանակը մաշել է շատ փաստեր և փաստաթղթեր։ Կյանքին հրաժեշտ են տվել նրանց հարազատներն ու ժամանակակիցները, ուստի և դրանցից շատ-շատերի գործունեությանն ու կենսագրությանը վերաբերող նյութերը անհետ կորել են։ Այժմ ստիպված ենք

բավարարվել XIX դ. վերջի— XX դ. սկզբի հայ ճարտարապետների մասին մնացած տեղեկությունների փշրանքներով, որոնք փորձ կանենք հետագայում լրացնել և ամբողջացնել ու հրատարակել որպես մի առանձին աշխատություն։

Այնուհանդերձ, մեր ձեռքի տակ եղած աղքատիկ նյութերը հնարավորություն են տալիս խոսելու հայ ճարտարապետների ստեղծագործական ուղիների մասին Անդրկովկասում։ Այսօր մենք կարող ենք խոսել միայն մի քանի ճարտարապետների մասին։ Նրանք բոլորն էլ միմյանց ժամանակակիցներ են, ավարտել են Պետերբուրգի վերոհիշյալ ինստիտուտը քաղաքացիական ինժեների կոչումով՝ նախագծելու ու կառուցելու իրավունքով, այսինքն՝ իրենց գործունեությամբ լայն պրոֆիլի ճարտարապետներ, որոնք նախագծեր են ստեղծել և իրականացրել կյանքում։

Անվանված ճարտարապետները տարբեր են իրենց անհատականությամբ, տարբեր են և նրանց ստեղծագործական մոտեցումներն ու գեղարվեստական խնդիրների ընկալումները, մեկնաբանումները, որոնք արտահայտված են իրենց կառուցած շենքերում։ Բայց կան նաև ընդհանրություններ։ Դրանք բխում են ժամանակի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից և պայմանավորված են այդ շրջանի ճարտարապետության բաղմաոճությամբ։ Այդ շրջանում չկար ոճական կամ գաղափարական մի ընդհանուր ուղղություն, ընդունված ոճերն էլ չունեին տեսական հիմունքներ, ուստի և չէին կարող երկար ապրել իրենց զարգացումը։ Այս վիճակը համընդհանուր էր համաշխարհային ճարտարապետության և, իհարկե, նաև Ռուսաստանի համար։ Այստեղ դժվար է որոշակի ժամանակագրական սահմաններ մտցնել ոճերի գոյության մասին, քանի որ ճարտարապետական կյանքում օգտագործվում էին նշված երեք ոճերն էլ և այդ պատճառով նախագծող հեղինակը իր ստեղծագործություններում հաճախ է օգտագործում դրանք՝ նայած շենքի բովանդակությանը, սեփական տրամադրությանն ու, իհարկե, պատվիրատուի պահանջին։ Ճարտարապետական խնդիրների այս մեկնաբանությունը բնորոշ էր նաև Անդրկովկասի համար։

Թիֆլիսի հայ ճարտարապետներից Մովսես Աղաջանյանի նախասովետական շրջանի գործունեությունը ընդգրկում է 1889—1915 թթ.։ Նրա կառուցած շենքերից առայժմ հայտնի են երեքը՝ Պետական բանկը՝ Լորիս-Մելիքովի (այժմ՝ Կեցխովելու, № 7, 1908—1910 թթ.), փոխադարձ վարկի բանկը՝ Սոլոլակի (այժմ Կիրովի) և մեծահարուստ Բոզարջյան եղբայրների բնակելի տունը՝ Գուդովիչ (այժմ՝ Ճոնկաձե, № 12, 1913 թ.) փողոցներում։

Պետական բանկի ճարտարապետությունը ավելի մոտ է կլասիցիզմի ոճին, բայց յուրահատուկ մեկնաբանությամբ։ Դա ավելի նկատելի է գլխավոր մուտքի դրվագում՝ լուծված ստեղծագործական մեծ ավյունով ու հիանալի նկարվածքով։ Շենքի այս մասը մի փոքր դուրս է բերված գլխավոր ճակատի պատային համակարգից և ձևավորված է բարձր գետնախարսխի վրա դրված երկհարկանի երկու զույգ կորնթական խոյակակիր սյուներով։ Վերջիններիս միջև տեղավորված է նույն բարձրության կամարակապ մուտքը։ Ելուստն ավարտվում է նուրբ նկարվածքի անտաբլիմենտով, որից բարձր դրված է հարուստ ձևավորումով պարապետը։ Հորինվածքը չափազանց հնչեղ է, քանդակային ու մոնումենտալ։ Պարզ և կուռ է լուծված հատակագիծը։ Դրա հորինվածքային առանցքը գլխավոր, գծային տիպի շքասանդուղքներն են՝ ուղղված դեպի հատակագծի կորիզը կազմող սյունազարդ գործառնության մեծ դահլիճը։ Վերջինս ծածկված է կամարաձև մետաղե ֆերմայով և ամբողջովին ապակեպատ է։ Սա նոր հնարանք էր և արագորեն տարածում է գտնում բազմաթիվ մեծաթռիչք դահլիճների ծածկերում։ Մ. Աղաջանյանի մյուս գործը, որ նույնպես մեծ հետաքրքրություն է ներկայացնում, Սոլոլակի փողոցի վրա կառուցված փոխադարձ վարկի բանկի շենքն է։ Դա Պետբանկի համեմատությամբ լուծված է բոլորովին այլ ոճով և ճարտարապետական այլ մոտեցումով։ Ճակատի ճարտարապետությունը արտահայտում է մոդեռնի միջին շրջանի լավագույն սկզբունքները, որը հենվում է մեծ՝ ցուցափեղկերի չափի բացվածքների ընդ-

գծման համակարգի վրա։ Ճակատը սիմետրիկ է՝ ընդգծված առանցքով։ Վերջինս արտահայտված է մուտքային մասի սյունազարդ լոջիայով, որի վրա բարձրանում է գլխավոր դահլիճի կամարակապ վիտրաժը, վերջինիս աջ և ձախ կողմերում, բարձակների վրա, տեղավորված են պատի հարթությունից դուրս մղված երկու, բարձրաքանդակ ատլանտները, որոնք իրենց ուսերի վրա կրում են շենքը պսակող անտաբլիմենտի ու խիստ զարգացած պարապետի բեռը։ Այս դրվագը հրաշալի է լուծված։ Սա ճարտարապետության և արվեստի օրգանական համադրման մի հիանալի նմուշ է, որն իր էությամբ և գեղագիտական հորինվածքով, ինչպես և ողջ շենքի գեղարվեստական կերպարով, եզակի և նշանակալից ստեղծագործություն է մոդեռնի ոճում։

Հատկանշական է Բողարջյան եղբայրների տունը։ Այստեղ ևս օգտագործված է մոդեռն ոճը և դարձյալ մատուցված ոճական մաքրությամբ և վարպետությամբ։ Քարե աստիճանները տանում են դեպի կամարով ձևավորված շքամուտքը։ Այս դրվագը մի փոքր դուրս է բերված պատի հարթությունից, որի շնորհիվ կամարի հետևում առաջացել է գլխավոր դռնով մուտքային լոջիան։ Վերջինս կամարի հետ միասին առնված է քարե, թեք ուսերով շրջանակի մեջ և ավարտվում է նույնպես քարե պարապետով, որ միաժամանակ ծառայում է որպես երկրորդ հարկի պատշգամբ։ Ելուստը ավարտված է բավական հնչեղ՝ հիմքում և գագաթում քանդակային շեշտերով ձևավորված ճակատոնով։ Մ. Աղաջանյանի այս ստեղծագործությունը ճարտարապետական իր բարձր հատկանիշներով նշվել է քաղաքի «Լավագույն շենք» (1913 թ.) մրցույթում։

Թիֆլիսի հայ ճարտարապետներից իր բեղմնավոր և հետաքրքիր գործունեությամբ աչքի է ընկնում ճարտարապետ Ղազար Սարգսյանը։ Նրա անձնական արխիվը մեզ է հասել համեմատաբար լավ վիճակում։ Ղ. Սարգսյանի նախագծերով Թիֆլիսում կառուցվել են (1902—1915 թթ.) թատերական, առևտրական և բնակելի շենքեր։ Նրա առաջին աշխատանքներից կարելի է նշել Զուրալովի նախկին ժողտունը (այժմ՝ Կ. Մարջանիշվիլու անվ. թատրոնը) և նախկին Կովկասյան սպայական ընկերության տունը (այժմ՝ հանրախանութ)։ Պատահմամբ այդ երկու շենքերը կառուցվել են Կիրոչնայա (այժմ՝ Մարջանիշվիլու) փողոցում իրար դիմաց և պահպանվել մինչև օրս։ Չնայած այն բանին, որ այդ նախագծերը կատարվել են միաժամանակ, սակայն դրանց ճարտարապետական ուղղվածությունը տարբեր է։ Թատրոնը հարում է մոդեռն ոճին, իսկ սպայական ընկերության տունը՝ էկլեկտիկային, երկու դեպքում էլ պահպանված են այդ ոճերի առանձնահատկությունները։ Թատրոնի շենքի ճարտարապետությունը լուծված է զուսպ ու համեստ։ Այստեղ չկան սյունաշարեր, բարդ ուրվագիծ։ Շենքի արտահայտչականությանը և գեղարվեստական կերպարին հեղինակը հասնում է մուտքային մասի զգալի շեշտով և նրա աջ ու ձախ ծավալների ետ ընկած կամ դուրս եկած ելևէջներով, տարբեր տիպի պատուհանների ռիթմով։ Հատակագիծը նույնպես կուռ է՝ ֆունկցիոնալ պրոցեսի պարզ կազմակերպումով։

Սպայական ընկերության շենքը տեղադրված է անկյունային հողամասում. հեղինակը անկյունը լուծել է կորագիծ ծավալով, որից մի փոքր առաջ դուրս եկած երկու թևերը տարածվում են դեպի երկու հարևան փողոցները։ Անկյունային ծավալի առաջին հարկը լուծված է սյունազարդ լոջիայով, որից վերև գտնվող կորագիծ պատը գոտևորված է 2-րդ և 3-րդ հարկերի բաց պատշգամբներով։ Անկյունը շեշտված է ութանիստ մեծ սրածայր ավարտով՝ գմբեթով։ Կենտրոնի և թևերի առևտրասրահների մեծ ու լայն պատուհանները բացահայտում են շենքի բովանդակությունը։ Հատակագծի լուծումը վերին աստիճանի պարզ է և տրամաբանական՝ առևտրի և գնորդների մեծ հոսքերը կազմակերպելու համար։

Ղ. Սարգսյանի 1902—1915 թթ. գործերից են Ա. Մանթաշյանի (հետագայում Աֆրիկյան եղբայրների) քարավանատունը, վաճառատունը, շենքերի այն շարքը, որ կոչվում էր «Մանթաշյանի առևտրաշարք»։ Դրանցից ամենամեծն ու ամենահետաքրքիրը քարավանատունն է, որ մի ճակատով դուրս է գալիս դեպի

Քուռ, մյուս կողմից՝ Սիոնի փողոց։ Դա մի հսկայական շենք է, որի հորինվածքային և հատակագծային միջուկը կազմում է ապակեպատ ծածկով ներքին բակը։ Վերջինիս պարագծով երեք հարկերում տեղավորված են բարձակային լայն պատշգամբներով իրար հետ կապված բազմաթիվ խանութներն ու առևտրական գրասենյակները։

Կարևոր է նշել Դ. Սարգսյանի նախագծերով կառուցված, թվով տասից ավելի, բնակելի տները։ Դրանք Թիֆլիսի հայ հարուստների եկամտաբեր տները կամ առանձնատներն են (Մանթաշյանի, Կալամկարյանի, Վարդանյանի, Կարաքեշիշյանի և այլոց)։ Նույն շրջանում նա նախագծել և կառուցել է Մանթաշյանի առևտրական դպրոցի շենքը՝ Բեյբութովի (այժմ՝ Էնգելսի) փողոցում։

Հիշատակության արժանի է ճարտարապետ Խրիստափոր Տեր-Սարկիսյանի գործունեությունը Թիֆլիսում։ Այս վարպետի ստեղծագործական ժառանգությունից շատ քիչ բան է պահպանվել։ Նրա կառուցած շենքերից միայն չորսն է մեզ հայտնի, որոնցից ամենամեծը Կովկասի նախկին փոխարքայի արքունի գրասենյակի շենքն է՝ Պյոտր Վելիկի (այժմ՝ Զերժինսկի, № 3) փողոցում։ Այն երկհարկ է, բավական բարձր գետնախարսխով, որի շնորհիվ շենքն իր ծավալով լավ տեսանելի է փողոցի 2—3 հարկանի կառուցապատումում։ Շենքի ճարտարապետությունը ավելի մոտ է ամպիր ոճին։ Պատուհանների եզրակալները, շքամուտքերի ձևավորումը, պարապետի վրա տեղադրված սկահակները վարպետորեն են նկարված և շքեղություն են հաղորդում ողջ շենքին։ Նույն ոճով են կառուցված նաև բնակելի տները՝ Դ. Շահմուրադյանի երկհարկ տունը՝ Օլգինսկի (այժմ՝ Լենինի, №43) և Ս. Աբազյանի նույնպես երկհարկ տունը՝ Բեյբութովի (այժմ՝ Էնգելսի, № 7) փողոցներում։ Պետք է հիշատակել նաև Լերմոնտովի և Սերգեևի փողոցների անկյունում կառուցված Մանթաշյանի երկհարկ մենատունը, որը աչքի է ընկնում ճակատների և ներքին տարածությունների ճոխ ձևավորմամբ։ Այս, թեպետ սակավաթիվ, գործերն իսկ բնութագրում են Խ. Տեր-Սարկիսյանին՝ որպես տաղանդավոր վարպետի։

Հին սերնդի վարպետներից մեզ հայտնի անուն է Դավիթ Զիսլյանը, որն աշխատել է Թիֆլիսում և Լենինականում։ Նրա նախասովետական գործերից մեզ առայժմ հայտնի է Թիֆլիսի «Փոքր թատրոնը»՝ կառուցված մոտավորապես 1911—1912 թթ. Գոլովինի (այժմ՝ Ռուսթավելի) պողոտայում, ուղիղ նախկին հայկական բարեգործական ընկերության (այժմ՝ Ռուսթավելու անվ. թատրոն) շենքի դիմաց։ Այս շենքը ավելի ճիշտ թատրոն-ակումբ է, որտեղ հիմա տեղավորված է Սովետական բանակի սպայի տունը։ Բացի 600 տեղանոց թատերական (բեմով) սրահից կան նաև բազմաթիվ այլ ակումբային տիպի սրահներ ու սենյակներ։ Երեհարկ համալիրի առաջին հարկը տրամադրված է եղել խանութներին։ Այս շենքի ճարտարապետությունը միանգամայն տարբերվում է մեր քննարկած շենքերի ճարտարապետական խնդիրների մեկնաբանումից։ Ինչպես արդեն տեսանք, մյուս հեղինակները իրենց ստեղծագործություններում գտագործել են էկլեկտիկ, մոդեռն կամ նեոկլասիկա ոճերը, մինչդեռ Դ. Զիսլյանը «Փոքր թատրոնի» ճարտարապետությունը ձգտել է ներկայացնել մաքուր դասական, անտիկ հունական ոճով, չնայած որ դա դժվար խնդիր էր բազմահարկ համակարգի համար։ Այնուհանդերձ հեղինակը մասամբ հասել է նպատակին։ Դրա մասին են վկայում հորինվածքի միջին մասի ֆրոնտոնածածկ հունա-հոնիական (էրիքտեոնական) խոյակներով որմնաքերծերի շարքը, որի մանրամասները գծագրված են անտիկ ճարտարապետության բնորոշ նրբությամբ։ Հետաքրքիր է լուծված ձախ անկյունը, որտեղ շենքը պսակող անտաբլիմենտը հենվում է ողջ հարկի բարձրությամբ դրված կարիատիդների վրա (դարձյալ էրեքտեոն)։ Շենքը կառուցված է հայկական սպիտակ և վարդագույն ֆելզիտից։

Դ. Զիսլյանի նախագծերով Թիֆլիսի Ռեուտով-Գանովի և Ալեքսանդրովի փողոցներում կառուցվել են 2—3 հարկանի մի շարք բնակելի տներ։

XX դ. սկզբի Թիֆլիսի ճարտարապետությունը անխզելիորեն կապված է

այնպիսի մի տաղանդավոր ու բեղմնավոր վարպետի անվան հետ, որպիսին Գաբրիել Տեր-Միքելյանն է (1874—1949)։ Մինչև 1910 թ. նա աշխատել է Բաքվում և ապա տեղափոխվել Թիֆլիս։ Լայն գիտելիքների տեր, առաջնակարգ նկարիչ, նախագծման բարձր կուլտուրա, ստեղծագործական անսպառ ու պայծառ երևակայություն և կառուցողական արվեստի վարպետ՝ այսպես կարելի է բնութագրել Գ. Տեր-Միքելյանին։ Նրա փառքը իրենից ավելի շուտ էր հասել Թիֆլիս՝ Բաքվի գործունեության արդյունքներով։ Գ. Տեր-Միքելյանի Թիֆլիսյան գործունեությունը սկսվում է Արամյանցի «Մաժեստիկ» (այժմ՝ «Թբիլիսի») քառահարկ հյուրանոցի (Գոլովինի պողոտայի և Բարյատինի փողոցի անկյունում) նախագծումով ու կառուցումով։ Այստեղ նա մեծ վարպետությամբ օգտագործել է դասական ճարտարապետության կորնթական օրդերը և հասել ստեղծագործական մեծ հաջողության, որի շնորհիվ «Մաժեստիկը» մտնում է Թիֆլիսի ճարտարապետական դեմքը բնորոշող կառույցների շարքը։

Հյուրանոցի շենքին հետևում են Միլյանի առանձնատունը Պասկևիչի (այժմ՝ Մաշարելի) փողոցում։ Այս շենքի ճարտարապետությունը հեղինակը լուծել է իտալական վերածննդի ոգով, բայց կարողացել է զարմանալի նրբությամբ տեղայնացնել ու արտահայտել այն տարիների Թիֆլիսյան կոլորիտը։ Թիֆլիսում նա կառուցել է նաև մի քանի բնակելի տներ ու այլ շենքեր։

Բաքվի հայ ճարտարապետների մասին տեղեկությունները շատ քիչ են։ Հայտնի են չորս անուններ՝ Վարդան Սարգսյան, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանց և Նիկոլայ Բաև, Ֆրեյդուն Աղալյան։ Ն. Բաևի՝ Բաքվում կառուցած շենքերից հայտնի են Մայիլյան եղբայրների թատրոնը, վիրաբուժական հիվանդանոցը և մի քանի բնակելի տներ։ Թատրոնի ճակատների ճարտարապետությունը, ցավոք, արտահայտում է մոդեռնի անկումային շրջանի տրամադրությունները, իսկ հիվանդանոցը, անսպասելիորեն, լուծված է դասականի սկզբունքներով։

Վ. Սարգսյանը պրոֆեսորի կոչումով 30 տարուց ավել դասավանդել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժանմունքում, եղել է ամբիոնի վարիչ և իր այս գործունեության ընթացքում դաստիարակել ու ուսուցանել է Ադրբեջանական ՍՍՀ-ի ճարտարապետների մի քանի սերունդներ։ Կառուցել է մի քանի շենքեր։ Հ. Տեր-Հովհաննիսյանցի առավել աչքի ընկնող ստեղծագործությունը Բաքվի հայկական եկեղեցին է (1907—1911)։ Չի կարելի ասել, որ հեղինակը հարազատ է մնացել հայ միջնադարյան արվեստին ու ընդունելի վերամշակումներով ներկայացրել նրա ավանդույթները։ Եկեղեցին քանդման է ենթարկվել (1930-ական թվականներին), և դա մեծ կորուստ է այս շրջանի հայ վարպետների ստեղծագործությունների թվում։ Հ. Տեր-Հովհաննիսյանցը նաև մի քանի հիվանդանոցների և շենքերի հեղինակ է։

Բաքվի հայ ճարտարապետների մասին խոսելիս, կրկին անդրադառնանք Գ. Տեր-Միքելյանի ստեղծագործությանը։ Նա Բաքվում կառուցել է մեծ թվով բնակելի և հասարակական շենքեր։ Նրա առաջին աշխատանքը Բաքում Յուզբաշյանի երկհարկ բնակելի տունն է, որ նախագծել է հայկական ոճով (1900 թ.)։ Ապրելով Հայաստանից դուրս, նա հոգով ու մտքով միշտ էլ կապված է եղել հայ ճարտարապետության հետ։ Մի քանի անգամ այցելել է Անի և բազմաթիվ հուշարձաններ, ավելի ուշ, 1924 և 1943 թվականներին, զբաղվել է Զվարթնոցի վերակազմության նախագծի հարցերով։ 1900 և 1907 թթ. մասնակցել է Բաքվի հայկական եկեղեցու նախագծերի երկու մրցույթներին, իսկ 1905—1909 թթ. կառուցել է Յալթայի հայկական եկեղեցին։ Եկեղեցիների այս շարքը երևան են հանում հեղինակի՝ հայ ճարտարապետության խորը գիտելիքները և իրենց լուծումներով ու ողջ էությամբ հետաքրքիր և ուսանելի ստեղծագործություններ են նոր շրջանի եկեղեցական ճարտարապետության պատմությունը ուսումնասիրողների համար։ Իր բոլոր ստեղծագործություններում նա հավատարիմ է մնացել դասական ոճի սկզբունքներին՝ ժամանակի նոր տիպի շենքերի բովանդակության պահանջների վերարտադրումով։ Դրան զուգահեռ նա բազմիցս դիմել է ազգային ճարտարապետության վերամշակման խնդիր-

ներին։ Դրա լավագույն օրինակը Բաքվում կառուցած Սադիխով եղբայրների բազմահարկ բնակելի տունն է (1909 թ.), որտեղ հեղինակը փորձ է արել օգտագործել ադրբեջանական ազգային ճարտարապետության ավանդույթները և այն մեկնաբանել նորովի։ Ժամանակի իշխող օտար ոճերի պայմաններում ազգային ճարտարապետության խնդիրները բարձրացնելը համարձակ փորձ էր, որը պսակվեց հաջողությամբ, հետագայում օրինակ ծառայելով ադրբեջանական սովետական ճարտարապետության կազմավորման պրոցեսում։ Նրա հաջորդ գործը քաղաքային հասարակական հավաքույթի ամառային շենքն է՝ կառուցված 1910—1912 թթ. Նիկոլաևյան (այժմ Կոմունիստական) և Զկալովի փողոցների անկյունում, սադիխովների տան դիմաց։ Այս շենքի ճակատների ճարտարապետությունում հեղինակը օգտագործել է արևմտյան դասական ոճը, բայց մեկնաբանել է յուրովի՝ հաշվի առնելով վայրի քաղաքաշինական, ինչպես նաև՝ Բաքվի կլիմայական պայմանների առանձնահատկությունները։ Շենքի ծովահայաց ճակատը ներկայացված է ճոխ, օրդերային համակարգով լուծված սյունաշարերով։ Դարավանդներով դեպի ծովը իջնող այգին և շենքի ծավալատարածական հորինվածքը, ճակատների ռելիեֆ մշակումը, մանրամասների նկարվածքը անջնջելի տպավորություն են թողնում։ Իր քաղաքաշինական դրվածքով, ընդհանուր հորինվածքով և ճարտարապետական բարձր հատկանիշներով ամառային ակումբի այս շենքը, իր կառուցումից գրեթե 75 տարի անց էլ, որպես իսկական արվեստի ստեղծագործություն, մնում է քաղաքի ճարտարապետական զարդերից մեկը։ Նման հատկանիշներով են օժտված Գ. Տեր-Միքելյանի նախագծերով Բաքվում կառուցված նաև մյուս շենքերը՝ Ադամյան եղբայրների բնակելի տունը, առևտրական ուսումնարանի համալիրը և այլն։ Դրանց ճարտարապետությունը մատուցված է այլ ոճերով, բայց դարձյալ ճշմարտացիորեն արտահայտում է ժամանակի պահանջները՝ կրելով հեղինակի անհատականության և տաղանդի կնիքը։

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Երևանում նույնպես նկատելի էր արդյունաբերության և խոշոր առևտրի վերելքը, սակայն Թիֆլիսի և Բաքվի համեմատությամբ ունեցել է ավելի նվազ չափեր, ուստի և քաղաքացիական շենքերի շինարարությունը տարվում էր ավելի փոքր մասշտաբներով։ Կառուցվող շենքերի տիպերը բազմազան են։ Դրանք բնակելի տներ են, վաճառատներ, խանութներ, վարչական շենքեր, հիվանդանոցներ և այլն։

Երևանի, Բաքվի և Թիֆլիսի այդ շրջանի ճարտարապետության ուղղվածության ինդիրներում որոշակի ընդհանրություններ կան, որ հետևանք էին արտադրական հարաբերությունների և սոցիալական պայմանների միանմանության։ Սակայն կան նաև տարբերություններ, որ գլխավորապես արտահայտվել են նրանում, որ էկլեկտիկան և մոդեռնը Հայաստանում մեծ տարածում չգտան։ Այստեղ լայն կիրառություն է գտնում նեոկլասիցիզմը, որը զգալիորեն զտված է ժամանակի քմահաճ մեկնաբանություններից, ուստի և ավելի մոտ է ռուսական կլասիցիզմի ավանդույթներին։ Դա հիմք է տալիս խոսել կլասիցիզմի հայկական մեկնաբանության մասին։ Բացի այդ, Հայաստանում օտար ոճերի օգտագործմանը զուգահեռ, փորձեր են արվում քաղաքացիական շինարարության մեջ վերագտնել, արտահայտել հայկական պատմական ճարտարապետության սկզբունքները։ Ճիշտ է, այդ փորձերը գործնականորեն ստացել են բավական ուրույն մեկնաբանություն և հեռու են ոճական մաքրությունից, սակայն այդ պրոցեսում կարևորը փաստն է։ Հենց այդ ոճով են շինում Պետրոս Զուրաբյանի (Զոհրաբյանի)՝ Էջմիածնում կառուցած մի քանի շենքերի ճարտարապետությունը։ Նա հիմնականում ապրել ու աշխատել է Թիֆլիսում, որտեղ կառուցել է մի քանի տասնյակ բնակելի և հասարակական շենքեր և այդ թվում՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նոր շենքը։ 1909 թ. Էջմիածնի ս. Աթոռի կողմից պատվեր է ստանում նախագծել և կառուցել մի քանի շենք, որոնցից առավել աչքի են ընկնում երկուսը՝ նոր վեհարանն ու մատենադարանը։ Դրանցից առաջինը ձգված ուղղանկյուն հատակագծով երկհարկանի պալատանման կառույց է։ Գլխավոր ճակատը ուղղաձիգ եռառանցք համակարգով մասնատված է երեք

մասի, որոնցից յուրաքանչյուրը շեշտված է կամարակապ ու ֆրոնտոնածածկ ծավալով։ Մատենադարանը միահարկ է, գլխավոր ճակատի միջին մասը ձևավորված է եռակամար, ֆրոնտով ծածկված լոջիայով։ Այս երկու շենքերի ճարտարապետությունը արժանի է հատուկ ուշադրության, քանի որ օտար ճարտարապետական ոճերով հեղեղված պայմաններում հեղինակի՝ ճարտարապետական ժառանգության օգտագործման ձգտումը աշխարհիկ շենքերում միշտ էլ կարևոր և բարդ խնդիր է եղել։ Տվյալ դեպքում որքան էլ խիստ նայենք այդ փորձի արդյունքներին, օբյեկտիվությունը պահանջում է նշել, որ չնայած որոշ մեխանիկական փոխառումների, հեղինակին հաջողվել է առանձին դրվագներում հասնել ստեղծագործական հաջողության. դա նկատելի է մատենադարանի շենքում, որի ճարտարապետությունը ավելի կոնկրետ և համոզիչ է վերարտադրված։

Իր բեղմնավոր և բազմակողմանի գործունեությամբ հիշատակության արժանի է ճարտարապետ Վասիլի Միրզոյանը, որը մեծ ներդրում ունի Երևանի ոչ միայն կառուցապատման, այլև բարեկարգման աշխատանքներում, ջրամատակարարման, կոյուղու և առաջին հասարակական տրանսպորտի՝ ձիաքարշ քաղաքային երկաթգծի, նախագծման և իրականացման հարցերում։ Վ. Միրզոյանի նախագծերով Երևանում կառուցված են մի շարք բնակելի և վարչական շենքեր։ Առաջիններից կարելի է նշել Բրաժնիկովի, Աֆրիկյան եղբայրների, Խանզադյանի, Եղիազարյանի և այլ հարուստ երևանցիների մենատները՝ քաղաքի կենտրոնական մասում։ Վարչական շենքերից հատկանշելի են քաղաքային վարչության, «Կազշննայա պալատի», Պետբանկի, քաղաքային վարչության և Երևանի նահանգապետի շենքերը։ Նրա նախագծերով կառուցվել են նաև բավական թվով եկեղեցիներ (Երևանում, Քանաքեռի զինվորական եկեղեցին, Գորիսում, Նոր Բայազետում և այլուր)։ Դրանց ճարտարապետությունն իր հարուստ մշակված ճակատներով, տուրք տալով ժամանակի կլասիցիզմին և հայ միջնադարյան հուշարձանների երբեմն քմահաճ մեկնաբանությանը հարմարեցված ճաշակին, միևնույն ժամանակ ի հայտ են բերում հեղինակի գեղարվեստական մտածողությունն ու ստեղծագործական ինքնուրույնությունը։ Այդ երևույթը ընդհանուր առմամբ կարելի է նկատել հմուտ վարպետների գործերում, թեպետև դրանց հեղինակը ընդամենը 4—5 տարի առաջ էր թողել ուսանողական նստարանը։ Ընդհանրապես ստեղծագործական նման վաղ հասունությունը բնորոշ էր Անդրկովկասի հայ ճարտարապետների գործերի մեծամասնությանը։ Նույնը կարելի է ասել հին Երևանի մի այլ կառուցողի՝ Բ. Մեհրաբյանի մասին, որը Աստաֆյան (այժմ՝ Աբովյան) փողոցի վերին ծայրում 1899—1900 թթ. կառուցել է ուսուցչական սեմինարիայի հոյակապ երկհարկ շենքը։ Ուշադրության արժանի է նաև Բագրատ Արազյանի նախագծով կառուցված Ջանփոլադյանի թատրոնի շենքը, որը Հայաստանում թատերաշինության մեջ առաջին փորձն է։

Թվարկված շենքերի ճակատների ճարտարապետական մշակման համար կայունացած էին որոշակի սիրված մոտիվներ՝ ճակատի հարթության եռամաս մասնատումը, գետնախարսխային հարկերի ռուստապատ շարվածքը, վերեի հարկերի օրդերային մշակումը որմնահերձերով, պատուհանների հարուստ եզրակալներով և անպայման «հյուրեղ» քիվով։ Ճարտարապետական բոլոր մանրամասները աչքի են ընկնում քարի ստրուկտուրան արտահայտող նուրբ նկարվածքով։

Այսպիսով, պարզ է դառնում այն մեծ ստեղծագործական աշխատանքը, որ ներդրել են հայ ճարտարապետները Անդրկովկասի ճարտարապետության կազմավորման և մեծ քաղաքների գեղարվեստական դեմքի ձևավորման գործում։ Նրանց գործունեությունը կրում է ոչ միայն ստեղծագործական ոգեշնչման, այլև ինտերնացիոնալ նվիրվածության կնիքը։ Այդ առանձնահատկությունը նրանք առավել արտահայտել են Անդրկովկասում նաև սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո։ Կառուցել են, տարածել ճարտարապետական բարձր մշակույթ, դասավանդել են ճարտարապետական մասնաճյուղերում։

և պատրաստել ու դաստիարակել Վրաստանի ու Ադրբեջանի առաջին ճարտարապետ-կադրերը։ Նշենք ևս այն, որ հայ ճարտարապետները պատմական նույն շրջանում ստեղծագործել են նաև Անդրկովկասից դուրս՝ Հյուսիսային Կովկասում, Դոնի-Ռոստովում, Կիևում, Խարկովում, Մոսկվայում, Պետերբուրգում և արտասահմանում։

СТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЗОДЧИХ-АРМЯН В ЗАКАВКАЗЬЕ (КОНЕЦ XIX—НАЧАЛА XX ВВ.)

ЭДМОНД ТИГРАНЯН

Резюме

Развитие промышленного и торгового капитала в Закавказье XIX в. вызвало бурное строительство гражданских и промышленных зданий. В силу отсутствия местной технической интеллигенции все строительные и проектные работы выполнялись приглашенными из России и из-за рубежа специалистами. Формирование местной технической ителлигенции начинается в 1885 г., когда окончившие Петербургский институт гражданских инженеров архитекторы, возвращаясь на родину, постепенно включаются в процесс проектирования и строительства. Это в основном были выходцы из Закавказья—армяне-зодчие. К сожалению, архивы сохранили очень скудный материал об их деятельности. По неточным сведениям, в Баку, Тифлисе и Ереване работало около 50 архитекторов. Это архитекторы М. Агаджанян, Г. Тер-Микелян, Х. Тер-Саркисян, Г. Саркисян, В. Саркисян, Д. Числиев, Н. Баев, М. Мадатян, П. Зурабян, В. Мирзоян, Б. Аразян, Ф. Агалян, Аладжян и многие другие.

Ими построено множество общественных (банки, торговые дома, универмаги, театры, караван-сараи) и жилых зданий (особняков и доходных домов).

Независимо от стилевой направленности архитектура этих зданий свидетельствует о несомненном таланте и мастерстве их авторов.